կդիմանա քեզ: (Դիտելով նրան) Հը՛, չե՞ս խօսում, ո՞նց է քո բանը, քեֆդ լաւացա՛ւ: Տեսա՞ր ուր հասար:

ՈՒՍՏԻԱՆ.– (Շատ լուրջ) Գանգատ չունեմ աստծուց: Իմ քեթխուդա հօր սրտով եղաւ: Ցեղս ազնիւ էր. հալբաթ որ…

ՆԱԶԱՐ.– Էլի՞ ազնիւ ցեղդ մեյդան բերիր, ա՛յ կնիկ:

ՈՒՍՏԻԱՆ.– Լսիր, ի՞նչ եմ ասում, ա՛յ մարդ: Մի ուզում եմ իմանամ, թէ ո՞նց դառար թագաւոր:

ՆԱԶԱՐ.– Աստծո կամքով: Թագաւորական հրամանի մէջ էդպէս էլ գրած է. «Անհա-սանելի կամօքն աստուծո»:

ՈՒՍՏԻԱՆ.– (Երեսը խաչակնքելով) Հալբաթ որ… մեռնեմ նրա զօրութեանը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Սպասաւորների ձեռքով մրգեր է բերում ու հրամցնել է տալիս Նազարին եւ Ուստիանին, սպա մանկլաւիկների հետ հեռանում:)

ՆԱԶԱՐ.– (Մի քիչ նեղացած) Է, ի՞նչ շատ ես հենց մի գլուխ՝ «Ո՞նց եղաւ, ո՞նց եղաւ»:

ՈՒՍՏԻԱՆ.– Մի տեղովը դրուստ չասիր, այ մարդ, թէ էս ոնց եղաւ:

ՆԱԶԻՐ.– Հասանք էլի՛…

ՈՒՍՏԻԱՆ.– Կռուի-բանի մէջ եղա՞ր:

ՆԱԶԱՐ.– (Շվացնելով) Շիյո՛ւֆ… էն էլ ո՞նց…

ՈՒՍՏԻԱՆ.– Նեղ տեղեր շատ ընկա՞ր:

ՆԱԶԱՐ.– Նեղ տեղե՛ր…Ասեղի ծակեր անցանք ու մազէ կամուջներ որ… Հանաք բան գիտե՞ս: Կռիւներ եղան, որ աշխարհքն ամբարի պէս դմբդմբում էր:

ՈՒՍՏԻԱՆ.– Ախր էս ամենը քաջութեան, խելքի բան է ու…

ՆԱԶԱՐ.– Հա դէ, ի՞նչ խօսք; Քաջութիւն, խելքը իրա կարգին: (Մտածում է) Ի՛հ՛հ՛ ա՛ղջի, ի՞նչ քաջութիւն, ի՞նչ խելք, ի՞նչ զառաֆաթ: Բա՛խտն է բանը, բա՛խտը: Բախտ ունի՞ս, քեֆ արա, քոնն է աշխարհքը: Քամին կպտտի, կպտտի կբերի հարստութիւնը գլխիդ կածի: (Երգում է): Այ տե՛ս, բախտ չի՞: Կռիւ է: Կոտորւում են ճանճի պէս: Ասող լինի՝ էդ ո՞ւմ համար էք էդպէս կոտորւում: Իհարկէ Նազարի համար: Նրանք կոտորւում են, մենք ճաշ ենք անուշ անում: Հիմի կռիւը կվերջանա: Թէ կոտորուեցին՝ ինձ ի՞նչ: Թէ չկոտորուեցին՝ փառք ու պատիւը ո՞ւմ պիտի տան: Իհարկէ, Նազարին: Էստեղ ի՞նչ անի իմ խելքը: Ի՞նչ անի քաջութիւնը. Բա՛խտի բան է:

ՈՒՍՏԻԱՆ.– Ասում ես բախտի բա՞ն, հո՛…